



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Կ Ա Ն Ո Ն Ք

ՔՄՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Ց

Մ • Մ • ԱՌԱՆՁԱՐ

ԾԱԽԻԻՔ

ԳՐԱՎԱՃԱՌ Գ • ՄԱՐԳԱՐԵԱՆԻ



ՎԻՋԻՐ-ԵՎԵՆ ՎԱՐԻ

ԿՈՑԱՐԱՆ Գ • Ս • ՄԱՂ

—187

12
—
Պ-70

2010

17

ԿԱՆՈՆՔ

Q-70 ԳԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ

47

ՆԱԽԿԻՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀՍՄԱՐ

ՅՕՐԻՆԵԱՑ

Մ. Մ. ԱՌԱՆՁԱՐ

ԾԱԽԻԻՔ

ԳՐԱՎԱՃԱՌՔ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ



Կ. ԴՊՐՈՑ

ՎԷՋԻՐ-ԻԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ

ԳՐԹԱՐԱՆ Գ. Ս. ՄԱՂԱՋԱՅԵԱՆ

—1872—

2001

9136

ՀԱՄԱՐ ԲԱՆԱԿԱՆ

ՊԱՏՈՒՄ ԵՄ ԵՐԱՅԻՄԱՆ

ՅՅՅՅ

ՍՍՍՍ

Ի ՊԱՏՄԻԱՐԲՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. Տ. ԽԻՄԵԱՆ ԽՈՐՏԻՉ

ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍԻ ՏԱՐՈՆԻՈՅ



376
39

1878

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Քէ քաղաքավարութիւնը և մարդիկ բազմաթիւ ընելու պարտաւորող սկզբունքն է:

1. ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ և մարդիկ քաղաքավար ընելու պարտաւորող սկզբունքն՝ իսպառ և գործքք վայելու և կերպով կատարելու է:

2. Քաղաքավարութեան կանոնները բնաւ չի ճանչցող մարդը իր գտնելիս քաղքին տուրութիւններուն մէջ պահասութիւն ընելով առեւի կըլլայ ամէնուն:

3. Պակասութիւններնիս չյայտնելու համար ամէն գործքերնուս վրայ պէտք է մեծ ուշադրութիւն ընել պէտք է նաև ուրիշին պակասութեանը ներել. ամէն մարդուն իր տարիքին և իր աստիճանին վայելու չյարգը պահել, ամէնուն բարի կամենալ, բոյց նայել:

լու ենք որ կամեցածնիս գէշ բան ըլլալով՝ մենք աղէկ կարծած չըլլանք . ահա՛ ասոնք են քաղաքավարութեան կամ լու ևս մարդավարութեան ամէն մէկ անհատէ՛ պահանջուած գըլխաւոր կէտերը :

4. Խօսքերնիս և գործքերնիս լող տեսնողներուն մեզմէ՛ գանգատելու առիթ մը չի տալու համար՝ զգուշութիւն մը կայ որ կընենք, ահա այն է մարդավարութիւնը կրսէ՛ Լապիւյէր:

5. Մարդավարութիւնը շատ առաքինութիւններուն պակասութիւնը կըրնայ լեցընել, վասն զի՛ շատ անգամ ընելիք բաներնուս գէ՛մ կը կենայ . գէշ սովորութիւններնուս ետ կը ձգէ մեզ . չափել կշռել կուտայ մեզի խօսքերնիս և գործած բաներնուս մէջէն օգուտ կը հանէ՛ ընկերներնուս :

6. Մարդավարութիւնը երկուք կը բաժնուի, առաջնոյն կըսվի սըրտանց մարդավարութիւն . որ քրիստոնէական կամ բարոյական առաքինութիւններէն յառաջ կուգայ, այսինքն՝ խոնարհութենէ, աստուածսիրութենէ, պարկեշտութենէ և բարեսիրութենէ . երկրորդին ալ՝ երեսանց մարդավարութիւն կըսվի, որ անձնագիրութենէ, փառասիրութենէ և շահասիրութենէ յառաջ կուգայ :

7. Առաքինութեամբ մարդավար եղող մարդը բնաւ կուպիտ բաներ չըներ, իր ամէն պակասութիւնները կը ճանչնայ, անոր համար շատ պարկեշտ կըլլայ, ուրիշին յանցանքը կը ներէ . բայց իրեն ամենափոքր յանցանքը անգամ չուզեր ներել : Բարեսէր ըլլալուն ուրիշները միշտ կը շատադուլէ և զանոնք պատուելու արժան կը շատադուլէ և զանոնք պատուելու արժան կը զտնէ վրանին . ինչ աստիճան մարդէ, ինչ հանգամանք ունի արդեօք, ասոնք չի փնտուեր . որուն որ ըլլայ՝ սըրտանց գործ կը տեսնէ :

8. Իւր շահուն համար մարդավար եղողը՝ սընասպարծ . ինքնահաւան և անձնասէր կըլլայ, եթէ մէկը սիրէ, յարգէ կամ անոր երախտիք մը ընէ, իր օգտին համար է, բարեկամութիւն խոստանալները, ցուցուցած փոյթերը առ երեսս ձև մնէ միայն :

9. Իրաւ որ պէտք չէ՛ այս վերինին պէս մարդավար մարդուն նմանելու ջանալ, բայց այս ալ կայ որ՝ անանկ մարդու երէսէն այնչափ վտանգ չի տեսնուիր, այնչափ չի զղուիր մարդորչափ մէկ բիրտ՝ կոշտ ու աղտեղի տղի մը երեսէն :

10. Երեւելի հեղինակին մէկը կըսէ թէ, այս լուսաւորեալ դարուս մէջ անքաղաքավարու-

Իեան պատկասութիւնն ունեցողը՝ մէկ օրինչ
 կարծենալու հանձար մը պէտք է ունենայ՝ որ
 յայ իր պակասութիւնը ծանօթ է։ Սակայն մար-
 քավարութիւնը այնպիսի ձիրք մէ որ ունեցո-
 ւր ամէն մէկ աստիճանի մարդկանց հաճոյ կե-
 րեւի։ շատ բնական ձիրքերուն տեղը կը բը-
 ռէ։ Հարուստն և աղքատը պատուոյ տէր ընող՝
 ծերն և երիտասարդը միօրինակ գեղեցիկ երե-
 ցնեաց կատարելութիւնը տղայոց վրայ անսոճե-
 լէն մարդ շատ կատարծի։

ԳԼՈՒԽ Բ.

Եւ ինչպէս առաւօտները քունէն ելնելու է, և ինչ-
 պէս անթելու է, մտքորութեան համար ինչ հոգ
 պէտք է անել, պատկերու ատեն ինչ տարտը կայ
 կատարելու։

1. Օրվան ամէն մէկ վայրկենին մէյմէկ պարտք
 կը գնէ մեզի քաղաքավարութիւնը. անկողի-
 նէն ելնելունս սկսեալ մինչև ամենափոքր
 գործքերնիս քաղաքավարութեամբ պէտք է
 ըլլայ։

2. Տղայ մը գեա ոնկողինէն չելած իր սիրտը
 Աստուծոյ պիտի նուիրէ. և Աստուծոյ պիտի
 աղաչէ թէ շնորհքը իր վրայէն բոլոր օրը ան-

պակաս բնէ՝ օր իրեն գրված պարտքերը ամ-
 բողջապէս կատարէ. և աւելի յօժարութեամբ
 գործել ուզած պակասութիւններէն ետ մնայ-
 ահա՛ այս է մէկ սղին առաջին պարտքը ան-
 կողինէն դեա չելած։

3. Այս ճառայութեան և շնորհակալութեան
 առաջին հարկը Աստուծոյ վճարելէն վերջը,
 շատ մը անկողինէն պիտի ելնէ և որչափ որ
 հնար է՝ վայելութեամբ հագովի։ Շապիքով
 կենայր, կտրծքը՝ սրունքները և ուրիշ գոց
 պահելու տեղուանքները բաց թողուլը, գուր-
 տաներուն կապիչները մարդու առջեւ կապե-
 լը անշնորհք բան է. մանաւանդ աղջիկները
 զգոյշ պիտի կենան այս պակասութիւնները
 չբոթծելու, վաճն զի անոնց տղաքներէն ա-
 լելի ամօթ է։

4. Հագուստներդ հագնելիդ վերջը՝ ամէն
 առաւօտ երեսդ՝ աչքդ՝ բերանդ՝ ձեռքդ՝ դը-
 ւա՛. սկանջներդ՝ ակունքներդ մաքրէ՛, մազե-
 րըդ սանտրէ՛, եղունգներդ եթէ՛ երկնցած է
 կտրէ՛, լաթերդ փոշիոս մի՛ ձգեր. նայէ որ
 հագածներուդ վրայ պատուած, քակուք, բիծ
 չըլլայ. գուրպաներդ վար չկնայ. և օտքիդ
 ամաններն ալ մաքուր ըլլայ. վերջապէս անտնկ
 հագովէ որ քեզ տեսնողները այս տղին վարբը

աղէկ պիտի ըլլայ ըսեն : 5. Հոս պատուիրած բաներէս աւելի առողջութեան օգուտ բան չըլլար : եթէ որ մը այս պատուիրած բաներս տղայ մը զանց ընէ , այն տղայէն ամէն մարդ կը դանի , և անոր ասանկ անշնորհք հագովիլը տեսնողը կսկսի գէշ կարծիքներ ալ ընել վրան . այս բանը նոյն տղին ծուրութեանը կամ ուրիշ արտաքին կամ ներքին պակասութիւններուն կուտայ :

6. Լուացվելէդ վերջը ձեռքդ բարեւ բրունած կայնէ , և ամիտի մտքով աղօթքդ ըրէ . թէ քու թէ ծնողքներուդ հոգւոյ փրկութեանը մարմնական պիտոյքներուն հարկաւոր եղած շնորհքը խնդրէ Աստուծմէ :

7. Աղօթքդ աւարտելէն վերջը զնա հօրդ մօրդ ձեռքը պագ , և ինչ որ քեզի կը պատուիրեն աղէկ մտիկ ըրէ , թէպէտ պատուիրածնին աչքիդ ծանր կամ թեթեւ երեւի հնազանգութեամբ կատարէ :

8. Եթէ պառկելու ժամանակը գայ՝ ծնողքներէդ հրաման չառած մի երթար քովերնուն առաւօտուն պէս աղօթք ըրէ , վայելչութեամբ հանվէ . լաթերդ ալ մաքրէ ծալէ և տեղը դիր :

9. Միմիայն աջ կողմիդ կամ ձախ կողմիդ

վրայ պառկէ չըլլայ որ երեսիդ կամ կոնակիդ վրայ պառկիս . առողջութեան քնաս է , և սկսէ ցորեկվան բոլոր ըրածներդ մտածել :

10. Եթէ գէշ բան մը գործեր ես՝ Աստուծմէ ուղիղ սրտով թողութիւն խնդրէ , և խօսք տուր Աստուծոյ՝ որ մէկ մ'ալ այնպէս ամշնալու գործ չի գործես :

Գ Լ Ո Ւ Ն Գ .

Եկեղեցւոյ մէջ խնայէս կենալու է .

1. Թէպէտ ամէն տեղ Աստուծոյ առաջն ես , բայց առաւել ևս եկեղեցւոյ մէջ . որովհետեւ Աստուծոյ պաշտամունքը հան կը կատարի . պէտք է մեծ ուշադրութեամբ առանց միտքդ ուրիշ տեղէր դարցընելու մտիկ ընես և պարկեշտութեամբ կենաս :

2. Պատարագի ատեն և այլ հանդիսի մէջ կամաց աղօթէ որ ուրիշին աղօթքն ալ չ'տանդարես երբէք նոյն ատեն ընկերներուդ հետ չը խօսիս որ ուրիշներուն գայթ ազդութիւն չիտաս :

3. Քարոզի ժամանակ ուշադրութեամբ մտիկ ըրէ որ քրիստոնէական պատուէրները ըստ այնրմ կատարես :

3. Ամեն եկեղեցի մանելու գ ծնրադ բութեամբ
երեոգ խաչակնքէ և ւէբունական աղօթքը
հայրմերը գրուցէ :

ԳԼՈՒԽ 3 .

Թե՛ ճնողաց , գառափարակաց և քաղաքային իշխանաց
Թե՛ անց հեռ ինչպէս վարուելու է :

1. Նախ Աստուած սիրէ , և հոգևով մարմնով
ամար ծառայէ որ քեզ զաեղծեր է և կը խնա-
մէ :

2. Աստուծմէ վերջը այետք է որ քու
ծնողացը հետ համարձակ և անկեղծ , բայց
պատուով և մեծարանօք խօսիս : Զանոնք ծաղ-
րել , անոնց իծու խօսքեր բաել , անոնց թե-
բութիւնները ջանդիմանել . անոնց երեսն 'ի
վեր պուալ կանչել , անոնց դէմ քարկանալ ,
ձեռք վերցընել , և ուրիշ ասոնց նման գործ
կամ շարժմունք ոչ միայն մեծ անկրթութիւն
այլ և անզգամութիւն և Աստուծոյ պատաս-
բանին դէմ մեծ մեղք է :

3. Պէտք է որ դու քու ծնողացը պատուէր-
ներուն հնազանդիս և անոնց խրատները սիրով
և ակնածութեամբ մտիկ ընես , և եթէ անոնց

մէ յանդիմանութիւն կամ պատիժ կընդա-
նիս , պետք չէ որ ասոնց համար անոնց դէմ
ատելութիւն և թշնամութիւն տենենաս կամ
ոխ պահես . համոզուած ըլլալու ես թէ , ծը-
նողք իրենց զաւկըններուն ինչ որ կ'ըսեն կամ
կ'ընեն 'ի սիրոյ և անոնց օգտին համար է , և
գիտնալու ես նաև թէ : Ծնողք իրենց զաւկընե-
րուն կրթութեանը և երջանկութեանը համար
Աստուծոյ և ընկերութեան կամ ազգին առջև
բարոյական պատասխանատուութիւն մը ունին :

4. Ուրիշ մարդոց հետ վարուելու մասին այս
գրքիս մէջ ինչ քաղաքավարական զգուշու-
թիւններ որ պիտի դնենք , անոնց ամենն ալ
ծնողացը քով կատարելու պարտական ես :
Զոր օրինակ 'նստելու և ելլելու ատեն , տու-
նէն դուրս , սեղանի վրայ , և ուրիշ ամեն առ-
թի մէջ անոնց իբրև պատուաւոր և բարե-
բար անձի՝ պատիւ և ակնածութիւն ցուցընե-
լու ես :

5. Ամեն մարդու պարտաւորութիւնն է որ
որ և իցէ առթի մէջ իշխանութեան մը հրա-
մանին դէմ գործելէ զգոյշ ըլլայ : Իշխանու-
թէնէ տրուած ամէն պատուէր կամ արգելք
հասարակաց խաղաղութեանն և օգտին համար
է . ուստի զանոնք աւրելով ընկերութեան մէջ

ներդաշնակութիւնն աւրած , ուրիշներուն ալ
չար օրինակ տուած կ'ըլլանք : Օրինաց բացար-
ձակ կերպով հնազանդիլ՝ ամեն բարի քաղա-
քացւոյ պարտքն է . և մարդուս պատիւն և
երջանկութիւնը շատ անգամ օրինաց և իշխա-
նութեան հնազանդ ըլլալէն կախում ունի :
Օրինաց և իշխանութեան անպատամբ եղողներն
ընկերութեան օգտակար անձինք չեն համար-
ուիր և իրօք չեն . սնուի և անոնց պէտք ե-
ղած ատեն գործ կամ պաշտօն չի յանձնուիր :
և այնպիսի պաշտօն մը ունենալու ալ ըլլան ,
անկէ զրկուելու իրաւամբ արժանի են :

ԳԼՈՒԽ Ե .

Գպրոցի մէջ եւ գաստիարակաց կամ վարժապետաց
հետ վարուելու կանոններ :

Գպրոցը գաստիարակութեան գլխաւոր
տեղ է . և որովհետեւ գաստիարակութիւնը
ոչ միայն ուսում և գիտութիւն սորվելու , այլ
եւ կրթութիւն ունենալու մէջ կը կայանայ ,
գպրոց գացող տղէ մը հարկաւ քաղաքավա-
րութիւնն ալ կը պահանջուի : Ուստի ջա-
նալու ես որ գպրոցին մէջ ուրիշ բաներու հետ

քաղաքավարութիւն ալ սովորիս - վասն որոյ
միշտ ուշադիր ըլլալու ես թէ , ինչ բաներ քա-
ղաքավարութիւն են , և ինչ բաներ անոր հա-
կառակ . որպէս զի առջինները գործադրես և
վերջիններէն զգոյշ կենաս : Տղոց վարմունքը
գպրոցի մէջ գլխաւորաբար իրենց դաստիարակին ,
այսինքն վարժապետին և ուսուցիչնե-
րուն և իրենց գպրոցակից ընկերներուն հետ
է : Եթէ ասոնց հետ պատշաճ քաղաքավա-
րութեամբ վարուիլ սորվիս , նոյն վարմունքն
քեզ ունակութիւն ըլլալով , գպրոցէն դուրս
և գպրոցէն ելնելէն վերջն ալ ուրիշներուն հետ
նոյն կերպ վարմունք կրնաս ունենալ :

1. Դպրոց գացող տղայ մը , թէ մինակ ըլլայ
և թէ ուրիշ ընկերներու հետ , նախ և առաջ
ճամբան ծանրութեամբ երթալու է . առանց
վազելու , կանչու ըռտելու , քար նետելու և
ուրիշ ասոնց նման ստահակութիւններ ընելու .
ասոնք գուեհիկ և սրիկայ տղոց գործ են , կր-
թութեան հետամուտ եղող տղու մը ամենեւին
չեն վայլեր :

2. Նոյնպէս գպրոցէն ներս ետքը լուծեամբ
և զգաստութեամբ , ուրիշներուն հետ հարկ
չեղած տեղն առանց խօսելու և ժամանակ կոր-
սընցունելու՝ շիտակ վեր ելլելու , և դաստիար-

քակին կամ վարժապետին անը խնդրելէն , և
եթէ անոր իմացընելու բան մը ունիս , համա-
ռօտիւ իմացընելդ ետքը՝ տեղդ նստելու ես :

3. Եթէ վարժապետը կանչէ կամ բանմը հար-
ցնէ , իսկոյն ստքի վրայ ելլելու , և մօտ եր-
թալով , կամ եթէ տեղէդ հեռանալ հարկ չէ ,
կեցած տեղէդ որոշ ձայնով պատասխան տալու
ես որ քանի մը անգամ հարցումը կրկնել հարկ
չըլլայ :

4. Վարժապետին անուրիչ որ և իցէ մեծի մը
հետ խօսելու ատեն , առանց հարկի՝ ծիծաղի
կամ թեթեւ շարժումներ և ձեւեր ընել՝ քա-
ղաքավարութեան դէմ է : Միշտ գլուխդ շի-
տակ , թեւերդ բնական դերքի մէջ և զուարի-
դէմքով խօսելու ես :

5. Վարժապետին ուրիշի մը հետ խօսած ատե-
նը , հետաքրքրութեամբ կենալ և խօսակ-
ցութեան ուկնդիր ըլլալ , կամ առանց հար-
ցուելու խօսքի խառնուիլ՝ քաղաքավարու-
թեան դէմ է :

6. Քաղաքավարութիւնը կը պահանջէ նաեւ
որ տղայ մը դպրոցի մէջ առանց վարժապե-
տէն հրաման խնդրելու բան մը չընէ :

7. Ստէպ վարժապետիդ վրայ երթալ և ըն-
կերներուդ դէմ սնտրի և չնչին ամբաստանու-
թիւններ ընելդ անքաղաքավարութիւն ըլլալէն

զատ՝ քսութեան և շորտարուութեան նըշան է ,
բնկերներէդ մէկուն վրայ ծանր և վնասակար
յանցանք մը տեսած տեսնդ , յարմար ժամա-
նակ մը դիտելով , ծածուկ վարժապետին իմա-
ցընելու ես :

8. Գու ջանալու ես ոչ մագուր ըլլաւ . ուս-
տի՝ աղտոտ ձեռուրներով և աղտոտ երեսով ,
չի սանտրուած մագերով , երկայն եղունդնե-
րով և ուրիշ ասոնց նման աղտոզի կերպարան-
քով դպրոցին մէջ չերեւնաս : Դրպրօցին մէջ
ալ քու մատուրներդ , բերանդ , կամ երեսդ ,
ունեցած դիրքերդ , թուղթերդ , գրասեղանդ
դեմինը , մեղան թափելով կամ ժիլանի արտա-
ներով , աղտոտելէ զգուշանալու ես :

Տես նաեւ մագրութեան համար տրուած ու-
րիշ զգուշութիւնները :

9. Հանդստեան կամ խաղալու և օւրիշ որ
և իցէ զբօսանոց տեսնդ կատակելով կամ խիստ
բարկութեամբ , ուրիշներուն հետ խօսքով կամ
ձեռքով կուռիլ , դանտնք հրել , խթել , զտր-
նել կամ ուրիշ ասոնց նման բաներ ընել՝ կրթ-
ութեալ տղու մը համար մեծ ամօթ է :

10. Եթէ ընկերներէդ մէկը վարժապետի
յանդ իմանութիւն լսած կամ պատիժ տուած
տնիկսց ոյս պատճառաւ նախտանելու կամ ծագ

ըելու չես , այլ անոր հետ մանաւանդ կարեկցութեամբ վարուելու ես : կարեկցութիւնը կը պահանջէ նաեւ՝ որ տղայ մը իր դասընկերներէն տկարներուն կարելի եղած օգնութիւնն ընէ :

11. Գորոց գալու ատեն ճամբան և դպրոցին մէջ մտնելէդ ետքը ինչ զգուշութիւններ որ նշանակեցինք , դպրոցէն արձրկուելու ատենն ալ նոյն բաներուն միտ դնելու ես :

12. Գպրոցները սովորաբար կանոն մը կ'ունենան . քու մէկ պարտաւորութիւնդ ալ նոյն կանոններուն ուշագիր ըլլալդ և անոնց ամեն կէտը գործադրելդ է :

ԳԼՈՒԽ Զ .

Քաղեր եւ նասեր ինչ կանոններ ունին :

1. Քաղերը իր շնորհքն ունի . ոտքըդ պնջափ վերցուր որ գետինը չի քերէ և ձայն չի հանէ . քայլդ (ատրմըդ) ոչ մեծ և ոչ պըզտիկ այլ չափաւոր ըլլայ :

2. Քաղելու ատեն գըլուխդ շատ վեր մի բըռնիր , գոռոզութեան նշան է . շատ ալ վար մի բըռներ , գետնի վրայ բան բընտրողի պէս :

3. Չեռքըդ ետիդ մի կապեր , հասրէիով

(թէզպիհնով) մի խաղար . մէկ կողմէ միւս կողմ մի շարժիր , շատ ծանր մի քայլեր , ոչ ալ շատ արտօրնօք՝ եթէ ստիպող գործ մը չիկայ :

4. Ճամբան ձեռքդ ուտելիք չըլլայ . ինքնիրէնդ մի խօսիր , խաղ կամ երգ մի կանչեր , քըթիդ տակէն ձայն մի հաներ :

5. Յաթկուտելու պէս ոտքիդ մատըներուն վրայ մի քայլեր . կամ թէ ոտքդ ուժով գետին մի զարներ կառք (առապա) անցնելու պէս :

6. Նստին ալ իր շնորհքը ունի . ծունկերդ իրարմէ չի զատելով , գինովի պէս չերերալով հանդարտ և շիտակ նստէ :

7. Նստելու ատենդ ծանր բանի պէս նստարանին վրայ մի իյնար փռվիր . հիւանդի պէս տըքալով կռնակդ բարձին մի հասցընէր :

8. Ծուլութեան և անհոգութեան նշան է գըլուխը և բոլոր անձը ետեւին վրայ տանիլ և կըութնիլ :

9. Չեռքերդ երկու կողմի բարձերուն վրայ մի փռեր . ոտքդ մէկը մէկ կողմ՝ մէկը ուրիշ կողմ մի երկնցըներ . կռնակդ ուրիշ մի գարձընէր :

10. Երբ ոտքի վրայ ելնես ուրիշ մի կըռ-

թընիր . բաժնուելու ըլլաս , և ուրիշ նստող-
ներ ըլլան , ներողութիւն խնդրելով և խոնար-
հութիւն ընելով դնա :

ԳԼՈՒԽ Է .

Խօսելու ատեն ինչ զգուշութիւններ ընելու է :

1. Խօսքին տեղը չեկած և մինչեւ քեզի բան
մը չի հարցունեն մի խօսիր : Կուրի առջև կու-
րի և կաղի առջև կաղի խօսք մի ընել :

2. Եթէ ուրիշ մը կը խօսի , դուն անոր խօս-
քը մի կտրեր . սպասէ որ նա ըսելիքը վեր-
ջացնէ : Տրտմութեան խօսք ընողին առջև մի
խընդար :

3. Մէկը գիտցած պատմութիւնդ ընելու
ըլլայ , անոր բերնէն առնելով դուն մի պատ-
մեր , և գիտնալդ ալ շուտ մը մի յայտներ :

4. Խօսելու ատենդ այնչափ մի մօտենար մը-
տիկ ընողին , որ բերնիդ թու բերը ցաթ կելելով
անոր երեսը կամ հագուստը թրջեն : Որու
հետ որ կը խօսիս , անոր երեսը նայէ :

5. Քեզի մտիկ ընողին կոծակէն կամ ձեռ-
քէն մի բռներ որ քեզի մտիկ ընել տաս , մի
մըշտեր և մի հրեր անիկայ , ըսածս չիտակ չէ՞
մի հէ՛ , ըսելով :

6. Երկու հոգի ցած ձայնով խօսելու ատեն-
նին , անոնց քովէն հեռացիր , պատճառ մը
բըռնելով :

7. Քեզմէ վեր մարդու հետ շատ պարկէշ-
տութեամբ խօսէ . քեզմէ մեծին խօսքին մի
խառնուիր . որչափ որ կարելի է՝ դուն քու վը-
րայովդ քիչ խօսէ :

8. Ուրիշը խնդացնելու կամ դուն քեզ լսե-
լացի ցուցնելու համար մարդ մի ծաղրեր .
երբ խնդալու բան մը պատմես առաջ դուն
մի խնդար :

9. Միշտ զգուշութեամբ խօսէ . շատ ատեն
մարդ խօսելուն կը զղջայ , բայց լուռ կենա-
լուն բնաւ չի զղջար . եթէ խօսելու համար մէկը
քովդ քալու ըլլայ , ոտքի վրայ ել :

10. Խօսելու համար պէտք է աղէկ ձայն՝ ոչ
շատ բարակ և ոչ շատ հաստ , այլ անուշիկ և
յըստակ . ձեռքի և մարմնոյն շարժումները բա-
րեխառն և շնորհքով . երեսը հանդարտ և աչ-
քի շարժումը համեստ և խօսքը կարճ :



Տան մէջ կամ տունէն դուրս որ բանն ընելը վայել է
և որ բանը անվայել :

1. Չանա՛ որ անուշ լեզու , խնդումերես և
համբերող ըլլաս . և ուրախութիւն բերես ա-
նոնց՝ որ քեզի հետ տեսութիւն ընել կ'ուզեն :

2. Եթէ սենեկի մը դուռը դոց գտնես , կա-
մացուկ մը զս'րկ , և մինչեւ որ ներսէն ձայն
չի հանեն՝ մի բանար դուռը :

3. Թէ որ սենեակէն ներս մտնես , դուռը դո-
ցէ , որպէս զի ուրիշի մը հարկ չըլլայ գոցելու .
դուռը ամուր մի գոցեր , մանաւանդ երբ սեն-
եակին մէջը քեզմէ վեր մարդ ըլլայ :

4. Երբ տեղ մը մտնես՝ առաջ բարեւ տուր ,
թէ որ այն տեղի մարդիկը նստեց են՝ դու ալ
նըստէ , եթէ կայներ են՝ դու ալ կայնէ :

5. Քեզմէ մեծ մարդուն բարեւ տուած ա-
տենդ ընտանեբար (թէ քիֆօսիդէ) անոր ձեռ-
քը մի բռներ . չի վայլած ատենը իրարու վը-
րայ (թէ մէլահներ) մ'ըներ :

6. Քեզմէ մեծ մարդ մը քովէդ անցնելու ըլ-
լայ , անոր ճամբայ տալու համար քիչ մը ե-
տեւօք քայլէ . դուռնէ ներս մտնելու ատե-
նըդ կայնէ որ առաջ այն մտնէ . երբ սանդուխի

վըրայ գտնուիս՝ կայնէ որ առաջ այն ելնէ կամ
ելնէ :

7. Թէ որ ընկերութեան մէջ մարդու առջևէ
անցնելու ըլլաս՝ առաջ անոր դարձիր , գլխով
խոնարհութիւն ըրէ , ետքը անցիր :

8. Երբ բան մը տաս կամ առնես ձեռնոցնե-
րըդ (էլտիվէններդ) հանես , անանկ տաս առ-
նես . մեծի մը առջեւէն ձեռքդ երկնցընելով
բան մի առներ տար :

9. Քեզմէ գաղտուկ եղած բանը հասկընալու
մ'աչխատիր . նամակին հասցէին . գրած նա-
մակին , բաց ձգած գրքին կամ թուղթին
վըրայ հետաքրքրութեամբ մի նայիր որ հաս-
կընաս . ամարդութիւն է :

10. Մէկը տունը կամ սենեակը չեղած ատե-
նը , այն տունը կամ սենեակին մէջը ոչ (տօլապ)
բաց , ոչ ալ ուրիշ գոց բաներ . քաղաքավար
տըղան գիրք մը անգամ պիտի չի բանայ տի-
րոջմէն հրաման չառած . բարեկամին տանը
պարտէզէն ծաղիկ կամ պտուղ պիտի չի բըր-
ցունէ՝ բարեկամէն հրաման չառած :

Ժուռ գտլու և խօսելու ատեն ինչպէս վարուելու է :

1. Երբ բազմութեան մը մէջ կը գտնուիս՝ առաջ անցնիմ՝ ըսելով առջեւդ գտնուող մարդիկը մի հրբեր :

2. Ճամբան ետիդ մի դառնար ուրիշին վըրայ նայիր . այն մարդուն այնպէս կուգայ որ բրածին պակասութիւն մը պիտի գտնես :

3. Եթէ քեզմէ վեր մարդու հետ ժուռ գայու ըլլաս , նայէ որ վար սեպուած տեղէն քաւես , թէ որ տան կամ պատի քովէն անցնելու ըլլաս , վեր տեղը տանը կամ պատին մօտն է :

4. Եթէ երեք հոգի մէկտեղ ճամբայ երթան պատուաւոր տեղը երկուքին մէջ տեղն է , յետոյ մէջ տեղէն դացողին աջ կողմն է :

5. Ժուռ եկած ատենդ ընկերդ մի ձըգեր և առաջ երթար . ճամբու գլուխ քովի մարդէդ առաջ մի դառնար . դառնալու ատենդ կոնակդ անոր մի դարձընէր , երեսդ դարձուր :

6. Խաղալու ատենդ՝ ոտք մի կոխեր որ ընկերներդ ուղած խաղդ խաղան :

7. Չըլլայ որ (խուամարի) վերաբերեալ խաղեր

խաղաս . խաղը ստակ վաստըկելու համար չեսյլ կարգալէդ կամախատութենէդ հանգչելու համար հնարված է :

8. Խաղացած ատենդ յաղթելու համար ինքզինքդ շատ մի հոգնեցընէր . յաղթես ալ՝ յաղթուիս ալ՝ մի ինքզինքդ փոխեր :

8. Թէ որ խաղին մէջ յաջող ըլլաս մեծ մի խօսիր ուրիշները ծաղր ընելու պէս :

9. Եթէ խաղացած ատենդ մէկը քեզի ցաւընէ՝ մի բարկանալով դանդատ ընէր , որ ցաւցունողը քեզի շնորհապարտ մնայ , և ընկերներըդ քեզ աւելի սիրեն :

ԳԼՈՒԽ Ժ .

Սեղան նստելու և կերակուր ուտելու ատեն զգուշու թեան կանոններ :

1. Երբ ուրիշի մը տուն կերակուրի հրաւիրուղ՝ սեղանատունը մտնելուդ պէս՝ Տանուտերը չի հրամցուցած նստելու չես :

Լո՛2. Սեղան նստելէն ետքն ալ սեղանին վրայ գտնուած կերակրոյ մը ձեռք երկնցընելով անկէ առնելու չես . և միշտ սնակին մէջ չափաւր քանակութեամբ կերակուր առնելու ես

3. Մեծ անքաղաքավարութիւն է՝ սեղան

բերուած կերակուրներուն առ հասարակ կե-
 րակրոյ վրայ խօսելով ըսել թէ այս ինչ կերա-
 կուրն աղէկ է, այն ինչը՝ գէշ. կամ այս ինչ
 տեսակէն կ'ախորժի, այն ինչ տեսակէն չախոր-
 ժիր: Եթէ բերուած կերակրոյ մը համար Տա-
 նուտէրը հարցընէ թէ ինչպէս է կերակուրը
 պահուած թիւն մ'ալ ունեցած ըլլայ, պէտք է
 ըստ կարի պահասուած թեթեւցընես: Իսկ
 եթէ բացէն կերակրոյ մը համար հարցուի թէ
 տնկէ կ'ախորժիս արդեօք, պէտք է որ և իցէ
 տեսակի համար ինքըզինքդ անտարբեր ցուցը-
 նես, և միշտ կերակրոյ խօսքը կարճ ընելու ես:

4. Կերակուր մը որչափ ախորժելի ըլլայ, ան-
 կէ կրկին անգամ ուզելը քաղաքավարութեան
 գէժ է. բայց եթէ հրաւիրուողը շատ ընտանի
 է այն տանը մէջ ուր կերակուր կ'ուտէ. երբեմն
 նաեւ անխոհեմութիւն է, քանզի կրնայ ըլլալ
 որ այն կերակուրէն մնացածը հազիւ ուրիշնե-
 րուն համար բաւական ըլլայ: Եթէ կոչնատէրը
 նորէն անկէ իր հիւրին հըրամյունէ, հիւրն ա-
 նիկայ չամբըցընելու համար կրնայ շատ քիչ բան
 նորէն իր պնակն առնուլ:

5. Փռոցը կամ անձեռոցը (փէչէթան) աղ-
 օտաեղէ զգոյշ ըլլալու ես: Նոյնպէս աղտոտ պա-
 առաքաղ, տարգալ կամ դանակ՝ պնակին

մէջ կամ անոր կրթնցընելով դնելու ես որ վը-
 ուոցը չաղտոտի:

6. Անքաղաքավարութիւն է թեւերդ կամ
 թաշկինակդ կամ դլխարկդ սեղանին վրայ դը-
 նել:

7. Հաց կամ պտուղ ձեռքով փըրցընելով,
 մանաւանդ խածնելով ուտել անքաղաքավա-
 րութիւն է:

8. Անքաղաքավարութիւն է նաեւ քու պնա-
 կիդ մէջէն, եթէ սկսուած է, մաս մը բան հա-
 սարակած պնակին կամ ուրիշի մը պնակին մէջ
 դնել:

9. Ուրիշին առջեւէն հաց կամ դանակ կամ
 ուրիշ բան առնելու չէ, այլ, եթէ բան մը կը
 պակսի, քաղաքավարութեամբ խնդրելու ես:

10. Սեղանի վրայ հանդատանալու համար կօ-
 ճակ քակել. կամ հանդերձը թուլցընել՝ մեծ
 ամօթ է. այս պատճառաւ մինչեւ ցպարպատիլ
 ուտելէ զգոյշ կենալու ես:

11. Ոսկր ծծել, կամ պնակին վրայ դարնե-
 լով մէջի ծուծը թօթուել, պատառաքաղով
 կամ մատով ակուայ խառնել նոյնպէս անկըր-
 թութիւն է:

12. Զլուելի և անքաղաքավար բան է մատ-
 ուրներով բերանը կերակուր դնել, շրթունքը

կամ մատուընները լղել :

13. Հասարակաց սնակին մէջ իրեն համար ամէնէն աղէկ մասը վնասըներով առնուըն ալ ոկրամոխութեան նշան , և անքաղաքավարութիւն ես :

14. Ուտելու ատեն շրթունքներով կարգէ դուրս ձայներ հանելէ , մեծ մեծ պատառներ բերանը դնելէ կամ շատ արագ ուտելէ զգուշանալու ես :

15. Անքաղաքավարութիւն է նաեւ կերակուր մը հոտուըտալ , կամ համը նայիլ իբր թէ փորձելու համար թէ արդեօք աղէկ է : Եթէ կերակուր մը անախորժ հոտ կտամ համ ունի , առանց այնպիսի նշաններ ցուցնելու , պատճառով մը ուտելէ հրաժարելու ես :

16. Բերանդ կերակուրով լեցուն եղած ատեն խօսիլ կամ ջուր խմել , կամ բերնիդ մէջ ծամածը հանել , սնակին վրայ բերնէդ բան մը , զոր օրինակ՝ փուշ կամ ոսկրի կտոր՝ դուրս տալ և ուրիշ ասոնց նման բաներ ընել կերակրոյ վրայ անկրթութիւն է : Եթէ բերնէդ բան մը հանել հարկ ըլլայ , ձեռքով առնելու և ըզգուշութեամբ , առանց ուրիշին ցուցնելու , սնակին մէկ կողմը դնելու ես :


17. Կերակրոյ վրայ հազալ կամ փռնգտալ

հարկ եղած ատեն , անմիջապէս բերնիդ դէմ ձեռքդ կամ թաշկինակդ բռնելով , կամ մէկ կողմը դառնալով և քիչ մը վար ծռելով ընելու ես :

18. Աղամանէն կամ պղպեղանոցէն մատուըներով առնելով ցանելու չես . այլ դանակին ծայրովը :

19. Ջուր խմելու ատեն կոկորդով կամ պրկունքով ձայն հանելով , կամ երկայն շունջով խմելու , և ետքը հեւալու կամ պրկունքներդ ծծելու չես . այլ անձեռոցով կամ ջրնջոցով բերանդ սրբելու ես :

20. Ջուր կամ գինի կամ որ եւ իցէ ըմպելիք հասարակաց մեծ ամանէն , զոր օրինակ՝ շիշք կամ մեծ բաժակը բերանդ դնելով խմելու չես այլ դաւաթի մը մէջ լեցնելով խմելու ես . նոյնպէս պատառաքաղ կամ դրդալ բերանդ դնելէն ետքը՝ նոյնը հասարակաց սնակին կամ որ եւ իցէ ընդհանուր ամանի մէջ խոթելդ անքաղաքավարութիւն է :



Քաղաքավարութեան դէմ եղող քանի մը անպարկեշտ
և աղտեղի սովորութիւններ :

1. Կան այնպիսի դէպքեր որոնց մէջ գործուած անքաղաքավարութիւնը միանգամայն պարկեշտութեան դէմ է : Ասանկ պարագաներու մէջ մարդիկ ընդհանրապէս անմտադրու-
թեամբ մանաւանդ քան թէ իրենց լրբութեանը համար յանցաւոր կը գտնուին : Քանի մը աղտեղի սովորութիւններ այս գլխոյն կը վերաբե-
ջին : Ուստի և այսպէս անխորհուրդ կերպով իբրեւ անպարկեշտ կամ լիբբ չի յանդիմանուե-
լու համար՝ հարկ է որ այն դէպքն յիշեցնենք :

2. Համեստ և մաքուր ըլլալով քու աղտոտ-
ներդ միշտ առանձին սենեակ մը կամ ծածուկ անկիւն մը փոխելու ես : Մերկ , նաեւ շապիքով կամ վարտիքով ուրիշին երեւնալը մեծ ամօթ է

3. Աղտոտ շապիկ կամ վարտիք գուլպա մէջ տեղ դնելու անվայել է . ասանկ աղտոտներ միշտ անկիւն մը ամփոփ և պլորած կը դրուին որ Ետքը զգուշութեամբ աղտոտներու համար որոշուած պահարանը կամ տեղը տարուին :

5. Անվայել , անկիրթ , նաեւ աղտեղի և զրզ-

ուելի է յայտնի տեղ մը թըքնել , կամ ձեռքով խնչել , կամ հանդերձին ստորոտին (փէշին) կամ թիփին քիթը սրբել . կամ թաշկինակին մէջ խնչելէդ ետքը՝ խշնքին վրան նայիլ , այլ պէտք է միշտ թաշկինակիդ մէջ խնչել և թըք-
նել և խնչելէդ ետքն ալ անմիջապէս ծածկել և թաշկինակիդ այն ծայրը մէջ ընելով թաշկինակը պլորել , և այնպէս ծոցդ դնել : Առանց ծալե-
լու կամ պլորելու թաշկինակդ ծոցդ դնելը , կամ թաշկինակին մերթ մէկ դին մերթ միւս դին աղտոտելը՝ նոյնպէս անկիրթութիւն է և աղտոտութիւն է :

Նոյնպէս փռնգտալու ատենդ ձեռքդ կամ թաշկինակդ բերնիդ դէմ բռնելու ետ որ թուքդ ուրիշներուն վրան չի ցատկէ :

6. Երբ մէկը մննէ թաշկինակ ուղէ , և մեր ծոցի թաշկինակն անոր տալ հարկ ըլլայ , ե-
թէ թաշկինակը խնոտ կամ աղտոտ է , պէտք չէ անիկայ անոր տալ : Դարձեալ այնպիսի աղ-
տոտ թաշկինակի մէջ որ և իցէ բան դնելու , կամ անով երես կամ քրտինք կամ ձեռք սրբ-
ելու չէ :

7. Աղտեղի և զրուելի է նաեւ մատուրնե-
րով քիթդ կամ ականջդ խոտնել , ակուաներդ մատուրներով կամ եղունքներով մաքրել , մա-

արդ բերանդ դնել, եղունքներդ կրծել և ուրիշ ասոնց նման աղտոտ սովորութիւններ ունենալ : Սովորութիւններ ըսինք, քանզի կան տղաք որ ասոնց մեծ մասն իրենց շարունակ ունակութիւն ըրած են . և պէտք է գիտնալ որ այսպիսի աղտեղի ունակութիւններ մարդուս գրեթէ բոլոր կեանքին մէջ կը մնան, և ասոնց մէջ ետ կենայլը շատ դժուարին կըլլայ :

8. Աւելի մեծ անպարկեշտութիւն է հարկաւորութեան տեղերէ դուրս, բաց տեղ, զոր օրինակ՝ փողոցը կամ տուներուն տակը կամ բակը կայնիլ շուր թափել . և կամ հարկաւորութեան տեղ մտնելէդ ետքը դուռը բաց թողուլ :

9. Քաղաքավարութեան դէմ է նաեւ ընկերութեան մէջ կրակարանին քով նստիլ և կրակը խառնել, կամ կրակին մէջ բան ձգել կամ կրակին մէջ թքնել :

10. Ամօթ և անկրթութիւն է նաեւ, մանաւանդ պատկառելի ընկերութեան մէջ, ձեռքդ բանով մը խաղալ, ոտու ըններդ շարժել, կամ գետինը դնդել, կամ գլուխդ գերել մազերդ շտկել :

Ասոնց նման շատ անպարկեշտ միանգամայն աղտեղի բաներ կան որոնց անվայել ըլլալն ամեն մարդ ինքնին կրնայ գտնել :

Ոտքի ամաններու եւ հանդերձներու մասին քանի մը զգուշութեան կանոններ օ

1. Երբ դու փողոցէն տուն կու գաս, ամենեւնի առաջ ոտքի ամաններդ դրան դուրսը գլտնուած մազրիչ երկաթին, կամ ներքը սանդղին վարի աստիճանին վրայ եղող սրբիչին քսելով ցելսը մաքրելու ես : Յետոյ կօշիկներով բակը սլըտտելով աղտոտելն՝ անքաղաքավարութիւն է :

2. Ամառ ատեն ալ, երբ փողոցները չոր են, եթէ ոտքի ամաններով վեր ելլել տանը սովորութիւնն է . նոյնպէս կօշիկներդ սրբիչին մաքրելով, անոնց վրայի փոշին ալ թաշկինակով թօթուելով աղէկ մը մաքրելէ ետքը վեր ելլելու ես : Կրնայ ըլլալ որ փողոցները որչափ չոր և մաքուր ըլլան, փողոցէն տուն դալով ճամբան աղտեղի բանի մը վրան կոխած ըլլաս և այնպէս վեր ելլելով կրնայ տունն աղտոտել . և ասիկայ անքաղաքավարութիւն և անմաքրութիւն է :

Նոյնպէս ոտքի ամաններուդ վրայ փուշով վեր ելլել, և այնպէս ստըտիլ կամ նստիլն՝ անքա-

զաքավարութիւն և անմաքութիւն է : Իսկ ե-
թէ, դիպուածով կօշիկներդ այնպէս աղտոտածը
են որ հարեւանցի մաքրելն վեր ելլելու համար
բաւական չէ, պէտք է որ դու անձամբ լաթով
աղէկ մը մաքրես, կամ ասնը ծառային քաղա-
քավարութեամբ աղաչելով մաքրել տաս, և
կամ հողաթափ բերել տալով՝ ոտքի ամաննե-
րդ հանես և հողաթափներով վեր ելլես :
Ամեն մարդ այս զգուշութիւններն ընելու եւս
աւելի պարտաւոր է, եթէ դացած տունն օ-
տարի է :

Գու տանդ մէջ ալ, ոչ միայն ձմեռն՝ այլ և
ամառը, լաւադոյն է որ յապուկ հողաթափ ու-
նենաս, և միշտ դուրսը հազած ոտքի աման-
ներդ հանելով՝ հողաթափով վեր ելլես : Բայց
'ի դիպուածի հարկաւորութեան վերի զգու-
շութիւնները մոռնալու չէ :

3. Առաւօտուն տունէն դուրս ելած ատենդ,
նախընթաց օրուան չոր ցեխոտ ոտքի աման-
ներով դուրս ելնելն ալ մեծ ամօթ և անկրթ-
թութիւն ըլլալէն զատ, անհողութեան և ծու-
լութեան ալ նշան է :

Ռատի միշտ ջանալու ես որ կօշիկներդ մաք-
րուած և ներկուած և փայլուն դուրս ելնես :
Այս զգուշութիւնն օիւռան մէջ ալ ընել հարկ

է, երբ օտար տուն մանաւանդ պատուաւոր և՛
պատկառելի ընտանեաց այցելութիւն պիտի ը-
նես : Ռակի ամաններդ կրկին ըլլալով՝ այսինքն
(քաջ) հազած ըլլալովդ, ցեխոտ կօշիկներով
վեր չելնես : Վրան երկու մատ ցեխ կապած կօ-
շիկներդ վարը բակը թողուլն ալ ամօթ և ան-
կրթութիւն է . և այնպիսի ոտքի ամաններ վա-
րը տեսնողներն անտարակոյս պիտի կարծեն թէ
անոնց տէրը դուեհիկ մէկն է . և եթէ պատուա-
ւոր մէկն ըլլայն իմանան, անիկայ իբրև անկրթ-
և անհող պիտի մեղադրեն :

4. Ռոտքի ամաններդ վարը երբ հանես զանոնք
քովէ քով, և կարելի եղածին չափ ամփով տեղ
մը կամ անկիւն մը դնելու ես . անոնց մէկը մէկ
դի միւսը մէկ ուրիշ դի նետելը, կամ ոտքի ա-
մաններ հանելու համար որոշուած տեղէն ան-
դին հանելը՝ նոյնպէս անքաղաքավարութիւն
է : Մաքուր և կանոնաւոր տուներու մէջ սու-
վորաբար դրանք ներսի դին տախտակ մը կը
դրուի, և այս ըսել է թէ տանուտեարք չեն
ուզեր որ ոտքի ամաններն՝ ան որոշուած տեղէն
անդին հանուին :

5. Գու պիտի զգուշանաս նաև որ կօշիկ-
ներուդ կրունիկն (էօքճէին) վրայ կոխելով չի
3

ծուես . կամ եթէ կօշիկներդ կապիչ ունին , ա-
նոնք քակուած կամ վերթած ըլլալով չի պտը-
տիս : Այս ալ անհոգութեան և ծուլութեան նը-
շան է . ուստի և մաքուր կոկիկ և կանոնաւոր
մարդու յրայ անքաղաքավարութիւն կը հա-
մարուի :

Պատուած կամ քակուած կամ վրայի մորթը
սկրթած կամ մաշած ոտքի ամաններ հագնե-
լու համալ ալ նոյն բանը կրնանք բսել մանա-
ւանդ եթէ այնպիսի ոտքի ամաններով ուրի-
շի սուն այցելութեան երթուի : Տղոց համար
կենդադրենք թէ անոնց այսպիսի ոտքի ա-
մաններ հագնելուն յանցանքը ծնողաց չէ .
քանզի չենք կարծեր թէ մաքրութիւն և կա-
նոնաւորութիւն սիրող կրթեալ ծնողք , թէեւ
աղքատ ըլլան , երբէք չեն ուզեր որ իրենց տը-
ղաքն այնպէս պատուտած , մաշած և հին կօ-
շիկներով պտըտին : Իրենց զաւկըներուն հա-
սարակ և աժան նիւթէ կօշիկ և հանդերձ հագ-
ցընելն անոնց ամօթ չէ , եթէ անոնց կարողու-
թիւնն աւելի ազնիւն հագցընելու չի ներեր .
բայց պատրուտած և աղտոտած հագցընելու
ամօթը կրնայ ծնողաց տրուիլ :

Մաքուր և նորկեկ ըլլալու , սղտոտած և
պատրուտած չըլլալու մասին ինչ որ կօշիկնե-

րու համար ըսինք՝ ուրիշ հագուստներն և համար
ալ նոյնպէս պէտք է հասկընալ . ծակ զանկա-
պաններով մատուըներդ դուրս ինկած , շապ-
կիդ թեւերը կամ օձիքը (ետխան) քակուած
և պատուտած , նոյնպէս անդրավարտեացդ
(բանթալօնիդ) կամ բաճկոնիդ կամ վրայի
հանդերձիդ մէկ կարը կամ կօճակը քակուած
բրթած և մաշած պտըտիլը՝ ընդհանրապէս վե-
րը յիշուած մեղադրութեանց տակ կ'իյնայ ,
և միշտ անհոգութեան և անկրթութեան նշան
համարուած է :

ԳԼՈՒԽ ԺԳ .

Հա գերձներ եւ ուրիշ կարասիներ պահելու մէջ
կանոնաւորութիւն :

Կանոնաւորութիւնն ալ քաղաքավարութեան
մէկ մասն է : Կանոնաւոր կ'ըսուի այն տղան որ
իրեն վերաբերեալ ամեն բան , հանդերձ , կա-
րասի , գիրք , իրենց յատուկ տեղը կը պահէ
միշտ անկէ կ'առնէ և դարձեալ հոն կը գնէ :
Կանոնաւոր մարդուն սենեակը միշտ շտկուած
և մաքուր է . գահաւորակը (գարեօլան) ,

պահարանը (տօլապը) կամ սնտուկը , գրասեղանը , ամեն բան՝ աւելուած . մաքրուած և միշտ զարդարուած է : Ուստի՝

1. Պէտք է որ ամէն իրիկուն պառկելու առեւնքդ , երբ հանդերձներդ կը հանես , կարգաւ և յիտակ իրարու վրայ , որոշեալ տեղ մը դիր , վերարկուդ մէկդի . գլխարկդ մէկ ուրիշ դի նոյնպէս կօշիկներդ , զանկապաններդ և ուրիշ զգեստներուդ ամէն մէկը մէկդի նետելն անկարգութեան նշան և անկրթութիւն է :

Կարգաւորութեան սովորած տղան , առաւօտուն անկողնէն ելած ատենը , ամէն բան ամփոփ տեղ մը գըտնելով դիւրաւ և շուտով կը հագուի . հանդերձներն ալ մաքուր կը մնան :

2. Ամեն տղայ իր պահարանը՝ ուր իր ըզգեստները , սանտրը , վրձինը և ուրիշ կարասիները կը դնէ՝ միշտ շտկուած պահելու է , Ուստի պէտք է որ հանդերձ մը պահարանը գրած ատենդ անիկայ թօթուես , մաքրես ու ծալելով տեղը դնես : Հանդերձներդ քուրջի պէս պահարանին մէջ խառնիխուռն դնելդ կամ նետելդ անհոգ , զանցառու և կարգաւորութիւն չսիրող ծոյլ մարդու գործ է : Տղայ՝ մը այս թեւրութենէն ազատ ըլլալու համար՝ պէտք է որ ամէն տեսակ հանդերձ , դոր օրինակ՝ շապիկ ,

վարտիք , բաճկոն , վերարկու զատ զատ , և , եթէ շատ են , իրարու վրայ ուղիղ և մաքուր շարէ : Նոյնպէս երես սրբիչը , սրբելիչ ետքը միշտ որոշեալ տեղը կախէ , ոչ թէ սենեակին մէկդին նետէ : Նոյն կանոնաւորութիւնը պահելու ես նաեւ քու գրատանդ , գրասեղանիդ կամ գրղրոցիդ նկատմամբ : Այնպէս որ ասոնք բացուելուն պէս՝ ամեն բան շտկուած իր տեղը գտնուի , և ոչ այնպէս խառնիխուռն որ գրիչ մը կամ գիրք մը կամ ուրիշ որեւիցէ բան վնասուելու համար բոլոր գրասեղանդ կամ գրղրոցդ տակն ու վրայ ընել հարկ ըլլայ :

3. Կանոնաւորութեան մէկ գործն ալսա է որ երբ տղայ մը իր պահարանը կամ գրասեղանը կամ գրղրոցը , բան մը առնելու համար կը բանայ , գործը լրմնցընելէն ետքը՝ զանոնք նորէն գոցէ : Նոյնպէս սենեակին մէջ աթոռները միշտ կարգաւ պատին առջեւը կամ գրասեղանին քովը շարուած դրնէ , ամեն անգամ որ սենեակէն դուրս կ'ելնէ : Անհոգ , ծոյլ և անկարգ է այն տղան , որուն սենեակը մտած ատենըդ՝ կը տեսնես որ պահարանը բաց է , աթոռները խառնիխուռն ասդէն անդին , վերջապէս ամեն բան աստ անդ ցիր և ցան , կամ գրասեղանն և աթոռները փոշոտած , գետի :

նը թուղթի կտորներ նետուած են :

Պէտք է գիտնալ որ կանոնաւորութեան վարժ տղուն խելքը միշտ գլուխն է գրածը վերուցածը գիտէ , բան չի կորսնցընէր , ուստի և բան մը փնտրուած ատենը երկայն ժամանակ չի վառներ , մուռացկուտութենէ ալ ազատ կ'ըլլայ :

ԳԼՈՒԹ ԺԿ

Բարոյական խրատներ :

Հող տար որ խոնարհ ըլլաս , չըլլայ որ գիտութեանդ , խոհմութեանդ , յաջողութեանդ և այլ ունեցածիդ վրայ պարծենաս . իմաստուն և փորձառու մարդոց խորհուրդ հարցուր . հպարտ մարդու պէս ինքզինքդ խելացի մի կարծեր :

2. Աշխարհիս փորձութիւններուն համբերէ . քեզի վիշտ կամ ցաւ տրվողին փոխարէն ներող եղիր . նեղսրտութիւնը շատ անգամ գէշ վտանգներու կը տանի մարդը . համբերութեամբ շատ ծանր և դժվարին գործեր կը կատարվին :

3. Հնազանդ եղիր ծնողացդ , վարժապետ

տիդ , մեծիդ , և անոնց պատուէրը և խրատը պահէ : Հնազանդ եղիր Աստուածային և մարդկային օրինաց . յարդէ և մեծարէ զանոնք :

4. Խաղաղութիւնը սիրէ , ամէնուն հետ սիրով վարուէ . պարապ տեղը վէճ և կռիւ հանելէ զդոյշ եղիր . չըլլայ որ բանտարկութիւն ընես , խօսք խառնես , մէկուն խօսքը ուրիշին երթաս իմացընես :

5. Պարկեշտ եղիր . ամէն վարմունքդ չափաւորութեամբ և վայելչութեամբ կատարէ . ամէն մոլութենէ հեռի կեցիր . հող տար որ բարի անունդ չի կորսնցընես :

9 Գու խօսքդ ճշմարիտ ըլլայ . ճշմարտախօս մարդուն ըսածին ամէն մարդ կը հաւտայ , և չի կասկածիր . սիրտդ ինչ որ է , բերանդ ալ նոյնը թող խօսի :

6. Գու ընկերոջդ աղէկութիւնը տեսնելով , հող տար որ դուն ալ անոր պէս ըլլաս . ուրիշին ունեցածը քեզի օրինակ բռնէ , և բարի նախանձաւորութիւնով այն բանը ունենալու դուն ալ ջանա :

7. Ուրիշին ունեցածին վրայ մի նախանձիր . ընկերիդ աղէկութիւնը չի քաշելով մը վար մի գարներ , մի բամբասեր . նախանձոտ մարդը ինքզինքը կը տանջէ և անհանգիստ կ'ընէ :

8. Աղգդ սիրէ . ընկերիդ աղէկութիւն ընել
քու պարտքդ է . ընկերութեան մէջ քեզի ա-
մենէն մօտը քու Աղգդ է , զայն միշտ սիրելու
պարտական ես : Աղգդիդ օգուտը և շահը քու
անձնական օգուտէդ և շահէդ վեր բռնէ . ճշ-
մարիտ ժողասէրին պարտքը այս է :

9. Հայրենիքդ սիրէ , այն երկիրը ուր քու
հայրերդ և նախահայրերդ բնակեր են , և ա-
նոնց ոսկորները կը հանդչին , այն երկիրը քու
նուիրական տեղդ է . Հայաստան իր ամէն թըր-
ուառութիւններովը դարձեալ քու սիրելի տե-
ղդդ պիտի ըլլայ . և անոր բարօրութեանը և
պայծառութեանը հոգ տանիլ քու և աշխատիլ
պարտքդ է քանի որ Հայ ես :

ՎԵՐՋ

29. 2. 25100000

Handwritten text at the top of the right page, including the number 88.

Handwritten text in the middle of the right page, including the number 521.

1535

2073

0025684

Մէրճան չարչը թիւ 88 Բէրովրէ Մար-
գարեանի Համազգային Գրատունը կը
ծախուին աժան զնով հետեւեալ դա-
սագրքերը :

	ՎՐՂ
Ընթերցարան	3
Սրբազան Պատմութիւն	4
Աշխարհագ. Ուսում, Բնա. ֆա.	5
Քաղաքավարութիւն	4 1/2
Քերականութիւն Ե. Տէրոյենց	5
Թուաբանութիւն Պողանեան	8
Քրիստոնէական Մանր ուսմունք	2
Ք. Ք. Ք. փէչախնայճեան	1

<< Ազգային գրադարան



NL0025687